ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի մայիսի 22-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 11935970 ՀՀ դրամ տեղափոխել 04.5.1 ծրագիր 4251 հոդված՝ Սիսիան համայնքի փողոցների գծանշման և ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի հունիսի 2-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 27880477 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի պանթեոնի և հարակից տարածքի վերանորոգման աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ Աննա Կարապետյանի 2025 թվականի հունիսի 3-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1850000 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 4241 հոդված՝ որից 1100000 ՀՀ դրամ Սիսիանի համայնքի և <<Մարդը կարիքի մեջ>> բարեգործական հասարակական կազմակերպության միչև 2025 թվականի ապրիլի 16-ի կնքված աջակցության տրամադրման համաձայնագրի շրջանակներում ձեռքբերվող ավտոմեքենայի աշխատողի/վարորդի/ 5 ամսվա վարձատրության համար և 750000 ՀՀ դրամ ծրագրի օգնականի վարձատրության համար,
2. 77000 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 4215 հոդված՝ Սիսիանի համայնքի և <<Մարդը կարիքի մեջ>> բարեգործական հասարակական կազմակերպության միչև 2025 թվականի ապրիլի 16-ի կնքված աջակցության տրամադրման համաձայնագրի շրջանակներում ձեռքբերվող ավտոմեքենայի ապահովագրության գումարի վճարման համար,
3. 25000 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 4823 հոդված՝ Սիսիանի համայնքի և <<Մարդը կարիքի մեջ>> բարեգործական հասարակական կազմակերպության միչև 2025 թվականի ապրիլի 16-ի կնքված աջակցության տրամադրման համաձայնագրի շրջանակներում ձեռքբերվող ավտոմեքենայի գրանցման գումարի վճարման համար :

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի հունիսի 3-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածի

1. 300000 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 5113 հոդված՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Կամոյի 5 հասցեում գտնվող 914.23 քմ մակերեսով մասնաշենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացության ծառայությունների ձեռքբերման համար, որպիսի վերոնշյալ մասնաշենքը միանա Սիսիան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ին:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի հունիսի 4-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածի

1. 1200000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի կարիքների համար թվով 20 հատ նստարանների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով <<Հ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Հովիկ Իսաջանյանի 2025 թվականի մայիսի 13-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 948620 ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 4511 հոդված՝ <<Հ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի հունիսի 4-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածի

1. 1600000 ՀՀ դրամ տեղափոխել 05.1.1 ծրագիր 5129 հոդված՝ Սիսիան համայնքի կարիքների համար թվով 8 հատ մետաղյա աղբամաններ ձեռքբերելու համար:

2. <<ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ>> բարեգործական հիմնադրամի կողմից տարամադրված 1800000 դրամի գնումից առաջացած խնայողության գումարով ընդամենը 492000 ՀՀ դրամ, առաջարկվում է ձեռքբերել թվով 16 հատ աղբամաններ Սիսիան համայնքի կարիքների համար:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

05.06.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամտային ու ծախսային մասերում փոփոխություններ չեն նախատեսվում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

05.06.2025թ.